

ՀՏԴ 82. (479.25)

Գրականագիտություն

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԲԱՆԱՐՎԵՍՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ռուսաճանաչ ՄԱԻՅԱՆ

Բանալի բառեր՝ Մարդաբանական նոր ձևեր, վերլիբր, բանաստեղծական արվեստ, մետաֆոր, կենսաճանաչողություն, աշխարհընկալում, խորհրդանշ-պատկեր, ենթատեքստ, դրամատիզմ, հեղինակ, համեմատություն, էպիտետ, շարահյուսական միջոցներ, բառապաշար:

Ключевые слова: Новые методы восприятия человека, верлибр, поэтическое искусство, метафора, знание жизни, миропонимание, символ-образ, подтекст, драматизм, ирония, сравнение, эпитет, синтаксические средства, словарный запас.

Key words. New methods of human's perception, available poem, the art of poet, metaphorical, vital recognition, the perception of the world, symbol-image, context, drama, irony, comparison, epithet, syntactical methods, vocabulary.

Р. Саиян

Особенности поэтического искусства Ованнеса Григоряна

Реальность, человеческие чувства и идеалы, синтезируясь через поэзию, превращаются в художественное слово, подчеркивая ответственность поэта за создание человеческих образов в лирике.

Новое поколение литераторов в лице Ованеса Григоряна, следуя требованиям современной поэтической системы, обогащает искусство поэзии новым языковым мышлением, при этом главное внимание сосредотачивается на содержании, а не на форме.

R. Sayiyan

The Peculiarities of Hovhannes Grigorian's Poetical Art.

Reality, human feelings and ideas, synthesizing through poetry, transform into artistic speech, emphasizing the poet's responsibility for the creation of human images in lyrics.

The new generation of writers in the face of Hovhannes Grigoryan following the demands of modern poetic system, enriches the poetic art with new linguistic thinking wherein the main attention is focused on the content rather than the form.

Իրականությունը, մարդկային զգացումներն ու իդեալները բանաստեղծի միջով սինթեզվում, վերածվում են գեղարվեստական խոսքի, ուստի բանաստեղծը պատասխանատու է մարդակերտման իր արվեստում:

Գրական նոր սերունդը՝ ի դեմս Հովհաննես Գրիգորյանի, նոր լեզվամտածողությամբ ու արտահայտչամիջոցներով հարստացրեց բանարվեստը՝ հետևելով բանաստեղծական նոր համակարգի պահանջներին: Ձևի խնդիրը մի կողմ դնելով՝ սեռեցին իմաստային խորքերը ընդգրկելու վրա:

20-րդ դարում համաշխարհային պոեզիան հասել է խոշոր նվաճումների՝ որոնելով և գտնելով նոր գաղափարներ, մարդաբանական նոր ձևեր ու հնարավորություններ, ուր գծագրված է մարդու արդի կենցաղը՝ ժամանակակից աշխարհի իսկապես բարդ ու հակասական հարաբերություններում: Դարի պոեզիան ունի իր ներքին ուղղությունները, սոցիալական-փիլիսոփայական պատկերացումները, լեզվա-պատկերային տարաբնույթ ընկալումները:

«Պոեզիան,- հաստատում է Հ. Էդոյանը,- պատասխանատու է մարդու համար, քանի որ որոշ իմաստով, մարդը իր ներքին կառույցով ստեղծվում է նաև պոեզիայի կողմից՝ իբրև լեզվահոգեբանական մոդել: Այս տեսակետից պոեզիայի նշանակության ճշգրտումը միաժամանակ մարդու նշանակության ճշգրտումն է աշխարհի ժամանակակից վիճակում: Կարող ենք ասել, որ որոշ ժամանակահատվածում մարդն այնպիսին է, ինչպիսին պատկերվում է պոեզիայում, հետևաբար քմահաճ վերաբերմունքը պոետական խոսքին՝ վիրավորանք է այդ մարդու նկատմամբ»¹:

Իրականությունը, մարդկային զգացումներն ու իդեալները բանաստեղծի միջով սինթեզվում, վերածվում են գեղարվեստական խոսքի, ուստի բանաստեղծը իր լեզվամտածողությամբ ու արտահայտչամիջոցներով պատասխանատու է մարդակերտման իր արվեստում:

Դարի ազատության գաղափարները յուրովի արտացոլվեցին գրականության մեջ: Բանաստեղծության դասական ձևին փոխարինելու եկավ վերլիբրը՝ ազատ բանաստեղծությունը, որն իրենց բանար-

¹ Հ. Էդոյան, Շարժում դեպի հավասարակշռություն, «Սարգիս Խաչենց», 2009, էջ 263

վնասում օգտագործեցին դեռևս Սիամանթոն, Դ. Վարուժանը, Ե. Չարենցը, հատկապես 60-ականների գրական նոր սերունդը՝ հետևելով կառուցվածքային նոր համակարգի պահանջներին:

Ձևի խնդիրը մի կողմ դնելով՝ սևեղծեցին իմաստային խորքերը ընդգրկելու վրա, նրա մետաֆորային, պատկերային կողմերի ակտիվացմանը, որն էլ պայմանավորված է ընդգրկողի կենսաճանաչողությամբ, կենսափիլիսոփայությամբ, իրականությունն ընկալելու կենսափորձով:

Բանաստեղծը, իր աշխարհընկալումով ու աշխարհայացքով մտնում է բառի տարածության մեջ՝ լեզվապատկերային տարաբնույթ լուծումներ տալով աշխարհում կատարվող անլուծելի իրադարձություններին: «Պոեզիայի լեզվական կառուցվածքը, - ըստ Ն.Էդոյանի, - նրա աշխարհի մոդելն է՝ ազատված պատահականություններից և բոլոր ավելորդ կողմերից: Պատկերավոր ասած դա բառերից կազմված մի դիմակ է՝ կախված հեղինակի աշխարհի վրա, ուր դիմակը մնում է անշարժ, թեև շարժվում է նրանից այս կողմ գտնվող աշխարհը...»¹:

Իսկ բանաստեղծը մերկ նյարդերով պիտի արձագանքի շարժվող աշխարհի տատանումներին ու դադարներին, չվարանի կողքին կանգնած մարդու մասին ճիշտ խոսելուց, քանզի նրանից է սկսվում ժամանակակից բանաստեղծությունը. «Իսկ պոեզիան, - գրում է Հովհ. Գրիգորյանը, - հիմա խոսել է նշանակում (առաջ՝ երգել), ճիշտ խոսել»:

Վերջ ի վերջո փողոցն ավելի հետաքրքիր է: Զո կողքով մարդիկ են անցնում: Իսկ մարդկանց հետ դու քեզ ապահով ես գտում: Նրանք քեզ ստիպում են ապրել: Եվ ահա նրանց խոսքերը թափանցում են քո մեջ... որովհետև բոլոր մարդիկ էլ բանաստեղծության քիչ մշակելի»²:

Եվ պատահական չէ, որ Հովհ.Գրիգորյանը իր մեջ կուտակած մարդկային ատաղձը մշակում է նոր կոմպոզիցիոն լուծումներով, որն հազեցած է ենթատեքստով, օպոզիցիաներով, խորհրդանիշ-պատկերներով, հերոսի ինքնաբացահայտմամբ ու ինքնաձախուժմամբ, խոր դրամատիզմով, որն էլ հանգում է հեզանքին:

Հովհ. Գրիգորյանը, իր մեջ շերտավորելով իրականությունը, հասնում է նրա հատակին, ուր առճակատվում է այդ իրականությունը վերապրողի տառապանքից ծնված ողբերգությունը:

Իսկ ողբերգական շերտերը ողբերգության չվերածելու համար բանաստեղծը դիմում է նրա սահմանն հատող թեթև հնարանքին՝ հեզանքին՝ կյանքը որպես զավեշտախաղ ընկալելու ձևին: Դրանով իսկ նոր մարդուն ազատագրում է կյանքի բեռից, նրան մղում ազատության մեջ ինքնադրսևորվելուն, էկզիստենցիային առերևակելուն:

«Գրականության պատմությունը, - գրում է Պ.Սևակը, - վերջին հաշվով ինչպես-ի գարգացման պատմություն է, արտահայտչական նոր ձևերի ու եղանակների փնտրտուքի պատմություն»³:

Գրական նոր սերունդը՝ ի դեմս Հովհ. Գրիգորյանի, նոր լեզվամտածողությամբ ու արտահայտչամիջոցներով հարստացրեց բանարվեստը՝ հետևելով բանաստեղծական նոր համակարգի պահանջներին:

Հովհ.Գրիգորյանի բանարվեստը հազեցած է պատկերավորման ու շարահյուսական միջոցներով, բառապաշարի շերտավորմամբ, իսկ հիմնական արժեքը պայմանավորված է բանաստեղծի աշխարհընկալումով ու կենսազգացողությամբ:

Եվ որովհետև Հովհ. Գրիգորյանի բանաստեղծությունների գերակշիռ մասում հանդիպում ենք հեզանքին, ուստիև այն գուցա հեռաբար կվերլուծենք մյուս պատկերավորման միջոցների հետ:

Ահա Հովհ. Գրիգորյանի բանարվեստի համեմատությունները.

Ձմեռն անծանոթ քաղաքում ավելի է ձմեռ

և մենակությունը գորշ է ավելի,

և նույնիսկ ճնճողունները,

որ սառած արցունքների նման

կախվել են ծառերի թարթիչներից՝

առավել դժբախտ են...¹

¹ Նույն տեղում, էջ 272

² Հովհ. Գրիգորյան, *Բաց դռների օր Միերի քարայրում*, «Հայաստան» հրատ., 2008, էջ 9

³ Պարույր Սևակ, *Երկեր*, «Սովետական գրող» հրատ., 1985, էջ 578

Իր կյանքը որպես օտարական ապրող մարդը, ձմռանը, առավել քան երբևէ, զգում է կյանքի սառնությունն ու անհատի մենությունը, որին արձագանքում է բնությունը՝ յուրօրինակ համեմատությամբ. ճնճողկները սառած արցունքների նման կախվել են ծառերի թաթիլներից:

Կյանքի դատարկությունը վերապրողը մտահանգում է գավեշտ-կյանքին.

...այսքան տարի ապրեցի
և հիմա ոչինչ չեմ կարողանում հիշել,
որ գոնե
մատներիս ծայրերը տաքանան...²

Չմռան թատերաշրջանի ավարտին՝ «Ինչ-որ մեկի ձեռքին ճերմակ ձնծաղիկը հանկարծ պլպլաց // նորածին տարվա կաթնատամի նման»: Գարունը՝ նոր կյանքը խորհրդանշող ձնծաղիկը, համեմատվում է նորածնի կաթնատամի հետ:

Այս բանաստեղծության ենթատողերից ելնում է նոր կյանքին ու նրա խոստումներին անհաղորդ մարդը, որին մնացել է միայն փետրվարյան կարճիկ սանդղաքների մագլցումը, քանզի կյանքի տոնավաճառում առնվում ու վաճառվում է ամեն ինչ: Ահա թե որտեղ է ցավածին հեզանքը:

Իսկ «Աշուն» բանաստեղծությունում կյանքի աշնան այգին է, ուր թռչունները բնորոշիչ ածականներ են, իսկ կծկված ծերունին՝ ընկած վերջին տերևը.

... և թռչունները, որ ածականների նման
գեղեցկացնում են նրանց ճյուղերը չոր:
Եվ ցրտից կծկված մի ծերունի
այգու խորքում,
չորչորուկ ու սմբած՝
ծառից ընկած վերջին տերևի նման:
Կույզ է եկել նստարանին³:

Հետևում է վախճանի ու թույլ շողի համեմատությունը.

...աշնան տխուր ու քնքուշ հայացքը՝
արևի բարակ ու թույլ շողի նման,
որ թրթռում է
գունատ դեմքին⁴:

«Ուրբեր են այս մարդիկ» բանաստեղծության համամատությունների շղթայում անդեմ մարդն է՝ իր անորոշ կյանքով, անիմաստ անկումով.

1.Մանեկենները խանութների ցուցափեղկերում
անցկացնում են հերթական գիշերը
անշարժ կանգնած նույն դիրքով՝ Ղովտի կնոջ
նման
2...Հուսահատ բվիցով պտտվում են հոգիները
արհեստական ծաղիկների շխամրող գույներից
խաբված մեղունների պես:
3...վերջին ձուկը, որ
թաքտում է հուսահատ, ինչպես կյանքը,
որ գուցե թե մի օր մարի...⁵

Ահա մեկ ուրիշ խորունկ համեմատություն «Մի թողնեք, որ մեռնեմ անարցունք» բանաստեղծության մեջ.

Բառ առ բառ իջնում է գիշերը,-
և լուսինն ինչպես կտրված գլուխ

¹ Հովի. Գրիգորյան, Կեն ժամանակ, «Նոր Դար» հրատ., 2002, էջ 56

² Նույն տեղում, էջ 56

³ Հովի. Գրիգորյան, Բոլորովին ուրիշ աշուն, «Սով. գրող» հրատ., 1979, էջ 31

⁴ Նույն տեղում, էջ 32

⁵ Հովի. Գրիգորյան, Կեն ժամանակ, «Նոր Դար» հրատ., 2002, էջ 73

ընկնում է ճերմակ դաշտերի վրա¹:

Հակառակ խավարին ու մենությանը ընտելացած բանաստեղծի՝ չթողնելու անարցունք մեռնելու թախանձանքին, կտրված գլխի նման ընկնում է լուսինը:

Ճիշտ այսպիսի մի կյանք.

հրեշտակագուրկ, պարզունակ երկինք՝

լվացքի շորերի նման կախված ամպերից...²

Մեր կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ պարզունակ, հրեշտակագուրկ մի մի երկինք, ինչպես ամպերից պոկված լվացքը:

Սա ռեալ իրականության պատկերավոր վերապրումն է, որն ընկալողին գոտեմանդելու է գալիս թեթև հնարանքը.

... աստծո որդին տրտում ու անփութորեն

կոտրում են մեր սրտի ապակիները:

Այլ, ինչ պարզ են տեսնում

իմ հեռացող ու կորացած մեջքը

կոտրվող ապակիների միջից³:

Ծնվում է մյուս համեմատությունը.

և արյան պես ծորացող մի ճիչ՝

կոտրվող ապակիների միջից⁴:

Ճիչի համեմատությունը արյան ծորանքին պատահական չէ, քանզի նրա ու արյան ակունքները նույնն են, դեռ ավելին՝ ճիչինը կարող է ավելի խորը լինել:

Իսկ ինչ է կյանքը, եթե ոչ աշխարհ - անապատի անհունությունում մեքենագրված մի տող, ինչպես ուղտերի քարավան, չորացած կտավի մի վրձնահատված:

... և անապատի հարթ ու անծայրածիր էջի վրա

ուղտերի քարավանն է շարվել, ինչպես

մեքենագրված մի տող...⁵

Յուրաքանչյուր ստեղծագործության ներքին՝ մշտապես իմաստային փոփոխության ենթարկվող շերտը արտաքին՝ հաստատուն շերտին միացնողը մետաֆորն է: Մարդու կողմից ճանաչված ու ընկալված աշխարհը նաև անճանաչելի ու անմեկնելի է, հետևաբար մարդու միֆական գիտակցությունը անընդհատ փնտրտուքների մեջ է՝ անհայտը ճանաչելու ու ընկալելու: Իսկ այդ գիտակցության լեզվական արտահայտությունը մետաֆորն է: Ռիստիկ, որքան խորն է բանաստեղծի աշխարհընկալումն ու էկզիստենցիային առերեսվելու ձգտումը, այնքան նրա խոսքը շերտավորված է մետաֆորով: «Այլաբանությունը,- փիլիսոփայում է Խ. Օրտեգա -Ի-Գասեթը,- մտքի գործողություն է, որի օգնությամբ մենք ձեռք ենք բերում այն, ինչին հնարավոր չէ հասնել հասկացության միջոցով: Մոտիկի և ձեռքի տակ եղածի միջոցով մենք կարող ենք մտովի առնչվել հեռավորին և անմատչելիին: Այլաբանությունը ընդլայնում է մտքի գործողության շառավիղը, կարթի կամ հրացանի դեր կատարելով տրամաբանության մարզում»:

Նոր պոեզիան՝ ի դեմս Հովի. Գրիգորյանի պոեզիայի, պահանջում է մետաֆորային ընկալունակություն, որն էլ պայմանավորված է ընկալողի ինտելեկտով, կենսագագացողությամբ, քանզի յուրաքանչյուր ոք բանաստեղծությունը վերակերտում ու վերաիմաստավորում է յուրովի՝ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում:

Հովի.Գրիգորյանի բանարվեստում մետաֆորը հանդես է գալիս թե՛ իբրև արտահայտություն՝ իրականացնելով մտահղացումը, թե՛ իբրև բանաստեղծության հիմնական էություն ու նպատակ:

Ահա Հովի. Գրիգորյանի բանաստեղծական մետաֆորները:

¹ Հովի. Գրիգորյան *Բոլորովին ուրիշ աշուն*, «Մով. գրող» հրատ., 1979, էջ 16

² Նույն տեղում, էջ 19

³ Նույն տեղում, էջ 19

⁴ Նույն տեղում, էջ 19

⁵ Հովի. Գրիգորյան «Հրեշտակներ մանկության երկնքից», «Զվարթնոց» հրատ., 1992, էջ 77

Ոչինչ չորոնող հայացքով բանաստեղծական հերոսը քայլում է կյանքի դատարկ փողոցներով, իսկ շուրջքոյրը շարված են ոգու ձևերի մարմնավորչալները՝ փակ և բաց աչքերով, նաև.

Շենքերն են ծնրծնրում՝

մուշտակների մեջ փաթաթված թուսական գեղեցկուհիներ¹:

Դատարկության մեջ գեղեցկությունը նկատում ու բարեկիրթ ողջունելու է գալիս (այն էլ ոտքի թաթերի վրա, այսինքն ամեն ինչ տեսնելու հույսով) ձմեռը՝ բարեկիրթ դոնապանը.

Ձմեռը քայլում է ոտքի թաթերի վրա,

կանգնում է ամեն շենքի առաջ,

խոնարհ բարև է տալիս

բարեկիրթ ու հնազանդ դոնապանի նման:

Իսկ ունայնության լռությունը կլսվի և բաց աչքերը կտեսնեն այնժամ միայն, երբ փաթիլները կյանքի մայրերին կնվագեն հոգեպարար մեղեդի.

Իսկ փաթիլները՝ օրիորդի բարակ և թափանցիկ մատներ

նրբորեն իջնում են քաղաքի ստեղծների վրա²:

Այսօրինակ իրականության դառն ճշմարտությունները զգում ու ահագանգելու ձիրքով օժտվում են բացառիկները՝ Աստծո դեսպանները:

Ահա թե որն է բանաստեղծի առաքելությունը Հովի. Գրիգորյանի մետաֆորային պատկերներում.

...հենց նա է որ կա,

որ ամեն գիշեր հանգափորում է իր արցունքները

և ուրախությունն է մտցնում յիթմի զսպաշապիկի մեջ:

Նրա բառերից թարմ գիպսի հոտ է բուրում,

և կիրակի օրը կնոջը նվիրում է

մի փունջ դերբայական դարձված³:

Բայց ամպել-չանձրևելու գաղտնիքն իմացող բանաստեղծը մեկ-մեկ դուրս է գալիս համբերությունից՝ հաստատելու, որ ճշմարտությունը նրանք են միայն ընկալում, ովքեր նրա մեջ կենսատու հույս են տեսնում:

Իսկ ահա թե ինչպիսի մետաֆորային տողերով է պատկերվում կեղծ ժամանակի երեկոն.

...և ծաղիկների թերթերից թափվում է դիալոգի հեղեղը,

Եվ յիթմը ողողում է դեմքդ ցավի հետ հյուսված:

Ամուր սեղմվում են շուրթերն իրար

և ատամները նույնպես սեղմվում են իրար ամուր

այնքան ամուր, որ փակ աչքերի առաջ

նախ կլոր օղակներ են հայտնվում,

և հետո ճերմակ աղավնիներ՝ կտուցների մեջ

ծաղկած աֆորիզմներ պահած⁴:

«Ծաղկած աֆորիզմներ» մետաֆորային մակդիրը ստեղծված է բառիմաստային հակադրության վրա. աֆորիզմը միշտ լինում է անփոփոխ վիճակում, իսկ եթե ծաղկած է, ուրեմն հնարավոր է և անմեղության բերնից է ասվում՝ հավաստիացման նպատակով:

Տիեզերքի հյուլն մարդուն արարիչը տեղավորում է ապակեպատ մի աշխարհում, որպեսզի չփլվի ու չփշրվի նրա փխրուն մարմինն ու գերզգայուն հոգին: Իսկ ինչ է կատարվում ներքևում: Կատարվածի մասին, անպետք թղթի վրա՝ որպես «ցավների չնչին տարեգրություն» վավերագրում է կյանքի «տարագիրը»՝ ծնունդ տալով կենսափոխադրական մետաֆորին.

...և գիսալսելով ու ցնորված ուռենի,

որ երկար ու բարակ

մատներն է կոտրատում

¹ Հովի. Գրիգորյան «Բոլորովին ուրիշ աշուն», «Սով. գրող» հրատ., 1979, էջ 60

² Նույն տեղում, էջ 60

³ Նույն տեղում, էջ 68

⁴ Նույն տեղում, էջ 69

թանաքի բաց կապույտ գետակին թնքված¹:

Վերևին անհաղորդ Աստծո որդին փլված մարմնով, անփութորեն շարունակում է՝ այս անգամ արդեն ապակեպատ սրտերի փշրումը: Իսկ Աստծո տարագիր որդին մղձավանջային իրականության տնսիլներում արձակում է միայն մի ճիչ

Ա~խ, ինչ պարզ եմ տեսնում
 իմ հեռացող և կորացած մեջքը
 կոտրվող ապակիների միջից:
 Եվ ընդամենը այսպիսի մի ճիչ,

կոտրվող ապակիների միջից²:

Բանաստեղծի գիտակցված կենսասիրությունը բախվում է առօրյա կենսախաբկանքին: Լյանքի ամենափոքր օղակը իրենով լցնելու և այն ամբողջությամբ ընկալելու ու ապրելու կենսակարողից մտահանգում է կենսասպան մետաֆորային պատկերների.

...Օրը, օ՛, օրը, որը սահում է ահա մեր կողքով,
 Թևաթափ անցնում է հույսը լիացումի
 և կամացուկ արյունաքամ է լինում³:

Բայց վերստին փորձում է հաշտեցնել ու շղթայել մարդուն փշրված շղթային՝ օրվան, որպեսզի այլևս վերջակետովն այսպիսի մետաֆորները.

...իսկ արցունքի համար
 ձեր օրգանիզմը էլ աղ չի գտնի,
 և անհամ , շատ անհամ դուք լաց կլինեք⁴:

Տեղեկություններ հեղինակի մասին

Ռուզաննա Սաիյան – ԱրՊՀ ասպիրանտ, հայ գրականության և լրագրության ամբիոն

E-mail: Saiyan84@mail.ru

Նոդվածը տպագրության է ներառվում խմբագրական կոլեգիայի անդամ, ք.գ.դ. Ս. Խանյանը:

¹ Նույն տեղում, էջ 19

² Նույն տեղում, էջ 19

³ Նույն տեղում, էջ 20

⁴ Նույն տեղում, էջ 20